ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«28» սեպտեմբեր 2014թ. N 73

ք. Արմավիր

ՎԱՐԱԿԻՉ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ԵՎ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՆՈՐ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2012 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 16 -Ի N 76 ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 72-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետի <<բ>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.17-րդ կետի <<բ>> ենթակետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 24-ի N ԴԴ/04/9139-12 գրությունը.

կարգադրում եմ՝

1. Ստեղծել նոր հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2012 թվականի հոկտեմբերի 16-ի <<Վարակիչ հիվանդություններիդեմ պայքարի և կանխարգելման հարցերով հանձնաժողով ստեղծելու մասին>> N 76 կարգադրությունը:
3. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

ՄԱՐԶՊԵՏ Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի
2014 թվականի օգոստոսի 28-ի
N 73 կարգադրության

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄ

Հանձնաժողովի նախագահ՝

Լ. Մուրադյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի տեղակալ.

Հանձնաժողովի քարտուղար՝

Ծ.Գրիգորյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ.

Անդամներ՝

Գ. Սայադյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի կրթության , մշակույթի և սպորտի վարչության պետ.

Ա. Ղուկասյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ.

Ա. Այվազյան -Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ.

Գ. Հակոբյան -Հայաստանի Հանրապետության ոստիկանության Արմավիրի մարզային վարչության պետի տեղակալ /համաձայնությամբ/.

Ա. Թորոսյան <<Նոր Ակունք>> ՓԲԸ գլխավոր տնօրեն /համաձայնությամբ/.

Ս.Գասպարյան	-Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի Առողջապահության պետական տեսչության Արմավիրիմարզային կենտրոնի պետ /համաձայնությամբ/.
Ն. Սարգսյան	- <<Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն>> ՊՈԱԿ Արմավիրի մասնաճյուղի տնօրեն /համաձայնությամբ/.
Ա. Քարամյան	-<<Հայջրմուղկոյուղի>> ՓԲԸ Էջմիածնի տեղամասի պետ /համաձայնությամբ/:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Փ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ**